ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48 , Հեռ.060517670 էլ.փոստ
verinpteghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
10 ՄԱՅԻՍԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N124

ՀԱԿՈԲ ԵՂՈՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջը, ինչպես նաև քաղ. Հակոբ Եղոյանի դիմումը՝ որոշում եմ

1.Հակոբ Եղոյանին տալ իրեն պատկանող բնակավայրերի նշանակության տնամերձ հողամասում բնակելի տան կառուցման շինարարական աշխատանքները սկսելու թույլտվություն :

2. Հանձնարարել Հակոբ Եղոյանին շինարարական աշխատանքներն իրականացնել համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի համաձայն:

3. Շինարարական աշխատանքները սկսելուց հետո եռօրյա ժամկետում Վերին Պտղնի համայնքի համայնքապետարան ներկայացնել ձև N5 տեղեկանքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021 թ.մայիսի 10
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի,2-րդ փողոց թիվ 48, Հեռ. 060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
12 ՄԱՅԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 125

«ՄԱՐԻԱՆՆԱ ԴԱՎԹՅԱՆ» ԱՁ -ԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ,ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 53-Ն որոշման պահանջներով ինչպես նաև հիմք ընդունելով «Մարիաննա Դավթյան» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Մարիաննա Դավթյան» ԱՁ-ին տրամադրել հանրային սննդի կազմակերպման և իրացման, ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի իրացման թույլտվություն՝ 2021 թվականի մայիսի 13-ից մինչև հոկտեմբերի 1-ը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021 թ.մայիսի 12
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի,2-րդ փողոց թիվ 48, Հեռ. 060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
12 ՄԱՅԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 126

«ՄԱՐԻԱՆՆԱ ԴԱՎԹՅԱՆ» ԱՁ-ԻՆ ԺԱՄԸ 24.00-ԻՑ ՀԵՏՈ ԱՌԵՎՏՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 53-Ն որոշման պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով « Մարիաննա Դավթյան » ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը՝ որոշում եմ.

1. «Մարիաննա Դավթյան» ԱՁ-ին տրամադրել ժամը 24:00-ից հետո առևտրի կազմակերպման թույլտվություն՝ ընթացիկ տարվա՝ մայիսի 13-ից մինչև 2022 թվականի հունվարի 01-ը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021 թ.մայիսի 12
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
12 ՄԱՅԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 127

«ՄԱՐԻԱՆՆԱ ԴԱՎԹՅԱՆ» ԱՁ-ԻՆ ԶՎԱՐՃԱՆՔԻ ՕԲՅԵԿՏԻ ՀԱՄԱՐ ԺԱՄԸ 24.00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետերով, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 53-Ն որոշման պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով «Մարիննա Դավթյան» ԱՁ-Ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1.Բավարարել «Մարիաննա Դավթյան» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը և տրամադրել համայնքի տարածքում զվարճանքի օբյեկտի համար ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն՝ ընթացիկ տարվա՝ մայիսի 13-ից մինչև 2022 թվականի հունվարի 01-ը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՊՈՂՈՍՅԱՆ

20 Հբ մայիսի 12
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 ՄԱՅԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 128

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի բ) կետով և 34-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ Քաղաքաշինության , տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի 21.04.2021թվականի թիվ ՔՏՄ/20.5/4453-21 գրությունը, ինչպես նաև քաղ. Էդգար Հարությունյանի կողմից ինքնակամ մետաղական ծածկարան կառուցելու հայտնաբերման հիմքով՝ **որոշում եմ.**

1. Էդգար Հարությունյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
2. Վարչական վարույթի քննարկման օրը նշանակել 2021 թվականի մայիսի 17-ին, ժամը 12.00-ին:
3. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել Էդգար Հարությունյանին:
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է համայնքի ղեկավարի տեղակալ Յուրի Գևորգյանը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղ. Էդգար Հարությունյանին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ.ՊՈՂՈՍՅԱՆ**

2021 թվական մայիսի 12

գ. Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց, թիվ 48, հեռ. 060 517670,
էլ.փոստ՝ verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
13 ՄԱՅԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 129

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԿԱՅՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 11-րդ հոդվածի և 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 4-րդ հոդվածի պահանջների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N1325-Ն որոշմամբ սահմանված կարգի , հիմք ընդունելով Վերին Պտղնի համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 15-ի N21-Ն որոշումը՝ որոշում եմ.

1. 2021 թվականի հունիսի 01-ին Վերին Պտղնի համայնքապետարանի շենքում հրավիրել հանրային քաց լսումներ՝ Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի ներհամանքային ճանապարհների՝ 3-րդ փողոցի, 2-րդ փողոցի 1-ին նրբանցքի, 1-ին փողոցի 1-ին նրբանցքի, «Նորավան» թաղամասի 1-ին և 4-րդ փողոցների ասֆալտապատում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտի վերաբերյալ:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի ներհամանքային ճանապարհների՝ 3-րդ փողոցի, 2-րդ փողոցի 1-ին նրբանցքի, 1-ին փողոցի 1-ին նրբանցքի, «Նորավան» թաղամասի 1-ին և 4-րդ փողոցների ասֆալտապատում», ծրագրի բյուջետային

ֆինանսավորման հայտի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկման հրավերը՝ համաձայն հավելվածի:

3. Հանրային քննարկման ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել համայնքի ղեկավարի խորհրդական, քաղաքաշինության, հողօգտագործման,տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի խորհրդակցական

մարմնի անդամ Մաի Հակոբյանին:

4. Վերին Պտղնի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արման Զուրաբյանին՝

1) Համայնքապետարանի պաշտոնական կայքում տեղադրել Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի ներհամանքային ճանապարհների՝ 3-րդ փողոցի, 2-րդ փողոցի 1-ին նրբանցքի, 1-ին փողոցի 1-ին նրբանցքի, «Նորավան» թաղամասի 1-ին և 4-րդ փողոցների ասֆալտապատում », ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը, և այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում, նաև այն վայրերում , որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021 թ.մայիսի 13
գ.Վերին Պտղնի

Հավելված
Կոտայքի մարզի Վերին Պտղնի
համայնքի ղեկավարի 2021 թվականի
մայիսի 13-ի N 129 որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Համաձայն Վերին Պտղնի համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 15-ի «Վերին Պտղնի համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» N 21-Ն որոշմամբ հաստատված հավելվածի, **2021 թվականի հունիսի 01-ին ժամը՝ 15:00-ից-16:00-ը** Վերին Պտղնի համայնքապետարանի շենքում կկայանա հանրային բաց լսումներ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի ներհամանքային ճանապարհների՝ 3-րդ փողոցի, 2-րդ փողոցի 1-ին նրբանցքի, 1-ին փողոցի 1-ին նրբանցքի, «Նորավան» թաղամասի 1-ին և 4-րդ փողոցների ասֆալտապատում» սուբվենցիոն ծրագրի իրականացման վերաբերյալ: Հանրային լսումներին կարող են մասնակցել բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Հանրային լսումների ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձինք Վերին Պտղնի համայնքապետարանի պաշտոնական կայքում (www.verinptghni.am) հրապարակված «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի ներհամանքային ճանապարհների՝ 3-րդ փողոցի, 2-րդ փողոցի 1-ին նրբանցքի, 1-ին փողոցի 1-ին նրբանցքի, «Նորավան» թաղամասի 1-ին և 4-րդ փողոցների ասֆալտապատում» ծրագրի իրականացման վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց առաջարկություններն ու առարկությունները, որոնք կարող են ուղարկել (verinptghni.kotayq@mta.gov.am) էլեկտրոնային հասցեով, ինչպես նաև կարող են գրավոր ներկայացնել համայնքապետարանի աշխատակազմ:

Համայնքապետարանի աշխատակազմը ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հետադարձ կապի միջոցով տեղեկացնում է համապատասխան առաջարկությունները և առարկությունները ստանալու մասին: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 060-517670 հեռախոսահամարով:

Վերին Պտղնի համայնքապետարան